

զինքը եւ յաջորդ տարին կը յանձնէ իրեն Վատիկանի Արտաքին Գործոց վարչութիւնը: Իբր Գարտուղար Վատիկանի ունեցաւ Պա- չելլի դիւանագիտական փայլուն յաջողութիւններ զանազան պե- տութիւններու քով: Դարձեալ ինքն էր որ քահանայապետական պատգամը կը տանէր Ս. Հաղորդութեան Ժողովներու՝ իւր անձին հմայքով փայլ մը եւս աւելցնելով անոնց: Մտաւոր կարողու- թիւնը, համոզելու բացառիկ տուրքը, լեզուներու ճիրքը, մանա- ւանդ քահանայական սրբութիւնը, որ իւր մերձաւորութենէն կ'ար- տաշնչէ, գրաւականներ են, որոնք երբեք չեն վրիպած: Ուստի երբ 2 Մարտ 1939ին ընտրուեցաւ կառավարելու Կաթողիկէ Աշխարհը, բոլոր սրտերը վստահութեամբ ուղղուեցան դէպի իրենց Հօր՝ խոր համոզումով թէ նա է Աստուծոյ Մարդը:

Որդիական վստահութեամբ ու սիրով մենք եւս կը փութանք յայտնել մեր ուրախութիւնը նորընտիր Հօր, խնդրելով իր առատ հայրական օրհնութիւնը Միաբանութեանս ու ամբողջ Ազգին վրայ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի



ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԷ ԵՐՈՒՍԱԳԵՄԻ

Հայ Եկեղեցին ալ ունեցաւ իւր սուգը, որուն մասնակցեցաւ ամբողջ ազգը: Անգամ մը եւս մահը կը խլէր արդիւնաշատ կեանք մը՝ զեղեցիկ անցեալով ու Ժպտուն ապագայով, կեանք մը, որ կը խորտակուէր կէս ճամբան՝ թերաւարտ թողած շատ ծրագիրներ: Ամենապատիւ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշական տարւոյս Փետ- րուար 10ին կը վախճանէր սուգերու մէջ թողլով իւր Միաբանու- թիւնը: Գուշական Սրբազան Հայ Եկեղեցւոյ կարկառուն դէմքե- րէն մին էր շատ տեսակէտէ. անոր գործերը բազմաթիւ երեսակ- ներով կը ներկայացնեն ու կ'արդարացնեն այն լայն յոյսն ու վստա- հութիւնը, զոր Հայ Եկեղեցին անոր անձին հանդէպ տածած է:

Թորգոմ Արք. Գուշական, ծնած Պարտիզակ 14 Մեպտ. 1874, ուսումնական առաջին քայլերը կ'առնէ Դուբեան Ս. Ի առաջնոր- դութեան տակ. Արմաշու դպրեվանքին մէջ Օրմանեանի վերա- տեսչութեան օրով կ'ընդունի իւր կոչման ուսումները եւ 1896ին կը բարձրանայ քահանայական աստիճանին: 1907ին կը գտնենք զինքը Սեբաստիոյ իբր առաջնորդ. 1914ին կը կարգուի Եգիպտոսի տեղապահ ու քիչ ետք Առաջնորդ: Մեծ Պատերազմի տարիներուն

կը շրջի նուիրակի պաշտօնով Հնդկաստանի ու շրջակայից հայ գա- ղութները, 1929ին վարչական ծրագրով կ'այցելէ Եւրոպական հայաշատ կենդրոնները՝ նպատակն էր կազմակերպել զանոնք: 1931ին կը կոչուի յաջորդելու Երուսաղեմի պատրիարքական աթոռին վրայ իւր մեծ Ուսուցչին՝ Դուբեան Սրբազանին:

Այսպէս իբրեւ հանրային գործիչ Գուշական հայ Ժողովուրդի կեանքին մէջ ոչ աննշան դեր մը ունեցած է՝ Թուրքիա, Հնդկաս- տան, Եգիպտոս ու Պաղեստին: Ազգային շունչն ու ոգին անոր նկարագրին էական մէկ գիծն էր. այդ գիծը՝ հիմքը կը կազմէ անոր գործունէութեան համապատկերին մէջ, ուր կրօնական երանգը աւելի շեշտուած կը գտնենք: Յիշենք երկերէն Նարեկի աշխարհաբար յաջող թարգմանութիւնը, «Աւետարանի շաղկէն»- Խրիմեան Հայրիկի եւ Դուբեան Սրբազանի վրայ ուսումնասիրու- թիւններ կենսագրական նօթերով. Եգիպտոսի հայ եկեղեցիներու մասին գրքոյկ մը. մանրամասն Օրագրութիւն Պատերազմի շրջա- նէն եւն, ի մէջ այլոց Սուրբ Նշանի (Սեբաստիա) ձեռագրացու- ցակը, մասնակի լոյս տեսած «Հանդէս Ամսօրեայ»ի էջերուն մէջ: Ունի նաեւ կարգ մը թարգմանութիւններ մասնաւորաբար Փրան- սական գրականութենէ: Անտիպ կը մնայ ընդարձակ երկասիրու- թիւն մը Հնդկահայոց մասին: Երուսաղեմի աթոռը բարձրանալէն ի վեր կը վարէր ձեռնհասօրէն Սիոնի խմբագրութիւնը: Գուշա- կեան օժտուած է համոզիչ ոճով եւ հետորական շեշտով:

Գրական եւ վարչական արժանիքներուն հետ պէտք է յիշա- տակել նաեւ հանգուցեալ պատրիարքի տնտեսական մեծ հասկա- ցողութիւնը, որով կրցաւ փրկել Երուսաղեմի կալուածներն ու ապահովել մեծ մասով անոնց ապագան:

Վերակոչելով Հանգուցեալի յիշատակը՝ կը խոնարհինք անոր շիրմին առաջ, անվերապահ մասնակցելով հայութեան սուգին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի